**Աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 7 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ գործողությունները:**

**Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների գնահատված կարիքներ:**

Հաշվետու ժամանակահատվածում Հայկական Կարիտասի Գավառ «Փոքրիկ Իշխան» ցերեկանին խնամքի սոցիալական կենտրոնում աշխատանք է իրականացվել **101** երեխայի հետ (որից՝ **43** աղջիկ, **48** տղա):

- Հուլիս- **80** շահառու
- Օգոստոս- **84** շահառու
- Սեպտեմբեր- **95** շահառու

Հաշվետու ժամանակահատվածում կենտրոն է ընդգրկվել **14** երեխա (3 աղջիկ, 11 տղա), աշխատանքը ընդհատվել է **11** երեխայի հետ (5 աղջիկ, 6 տղա):
Իրականացվել են շահառու ընտանիքների դիմումների ընդունում, փաստաթղթերի հավաքագրում, կարիքների գնահատում և ԱԱԾ-ների կազմում:Պարբերաբար թարմացվել և համալրվել է շահառուների անձնական տվյալների բազան:
Ըստ եռամսյա ժամանակահատվածում **101** շահառուների շրջանում գնահատված կարիքների՝ կենտրոնի ԿԴԻՀ երեխաներն ու նրանց ընտանիքները, ովքեր ունեն սոցիալականացման և զարգացման ընթացքը խոչընդոտող զանազան հիմնախնդիրներ, մասնավորապես առանձնացվել են ըստ հետևյալ սոցիալական խմբերի՝

- Միածնող ընտանիքի երեխաներ- **9**
- Ոստիկանությունում հաշվառված, իրավախախտ երեխաներ- **1**
- Սոցիալականացման դժվարություններ ունեցող երեխաներ- **4**
- Վարքային դժվարություններ ունեցող երեխաներ- **1**
- Անբարենպաստ, կոնֆլիկտային ընտանիքի երեխաներ- **2**
- Սոցիալ-տնտեսապես անապահով ընտանիքի երեխաներ- **50**
- Արցախի հանրապետությունից բռնի տեղահանված ընտանիքի երեխաներ – **16**
- Հաշմանդամություն և/կամ հատուկ կարիքներ ունեցող երեխաներ- **18**

Հաշվետու ժամանակահատվածում Գավառի «Փոքրիկ Իշխան» ցերեկային խնամքի սոցիալական կենտրոնում աշխատանք է իրականացվել **67** ընտանիքի հետ:
Սոցիալ-հոգեբանական համալիր խորհրդատվություն է իրականացվել **75** ընտանիքի անդամների հետ, որից **64** մայր, **5** հայր, **5** տատ, **1** քույր:
Ըստ իրականացված հետազոտության ծրագրի **67** շահառու ընտանիքները պատկանում են հետևյալ տեսակների՝

- **Ընդարձակ ընտանիքներ** *(երեխաների դաստիարակությունը ղեկավարում են տարբեր հարազատներ կամ ընտանիքի մի քանի անդամներ (ծնողներ, զարմիկներ, տատիկներ և պապիկներ և այլն) ապրում են նույն տանը* – **30**
- **Նուկլեար ընտանքների թիվ** *(ընտանիք, որը ստեղծվել է հոր, մոր և նրանց երեխաների կողմից)*- **28**
- **Միայնակ ընտանիք** *(բաղկացած է այն բանից, որ ծնողներից միայն մեկն է ստանձնում ընտանիքի միավորը և, հետևաբար, երեխաների դաստիարակությունը)*- **9**

Ըստ գնահատված կարիքների շահառու ընտանիքներից **45**-ը ստանում են ընտանեկան նպաստ, գործազուրկ ծնողների թիվը կազմում է **46**(որից **38** մայր, **8** հայր), աշխատանք ունեցող ծնողների թիվը կազմում է **44** (որից **21** մայր, **23** հայր), արտագնա աշխատանք ունեցող ծնողների թիվը կազմում է **15** (հայր), հաշմանդամություն ունեցող, անաշխատունակ ծնողների թիվը կազմում է **6** (հայրեր):